ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Կարեն Բրուտյանի՝ Վրաստան կատարած այցի արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝** Կարեն Բրուտյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** քաղաք Թբիլիսի, Վրաստան, 2018թ. ապրիլի 17-20-ը:

4. **Հրավիրող կողմը՝** Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ՝ վրացական կողմ:

5. **Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝** Գործուղման նպատակ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության համակարգի բարելավման նպատակով՝ իրականացնել ճանաչողական այց Վրաստանի հարկային ծառայություն: Հանդիպումներ ունենալ Վրաստանի հարկային ծառայության հարկային վարչարարության համար պատասխանատու ստորաբաժանումների հետ, ուսումնասիրել վերջիններիս կողմից իրականացվող գործառույթները, այցելություններ կատարել առանձին ստորաբաժանումներ: Հարկային մարմնի գործառույթներին առնչվող ընթացակարգերին ծանոթանալու նպատակով այցելություն կատարել նաև Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայություն:

6. **Քննարկված թեմաները՝** Հանդիպումների ընթացքում Վրաստանի հարկային ծառայության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ներկայացվել է ծառայության կառուցվածքը, գործառույթները և քննարկվել են վերջին ժամանակաշրջանում իրականացված հիմնական հարկային ռեֆորմները, ներկայացվել են նաև հարկ վճարողներին մատուցվող ծառայությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների դերը հարկային վարչարարություն իրականացնելիս, հարկային հսկողության մեխանիզմները, գործիքները, դրանց արդյունավետությունը, իրավական և վարչական ընթացակարգերը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝** Հանդիպումներ են տեղի ունեցել Վրաստանի հարկային ծառայության ղեկավարի առաջին տեղակալի, հարկ վճարողների սպասարկման, հարկային աուդիտի, վերլուծության,

տեղեկատվական տեխնոլոգիաների, իրավաբանական, մարդկային ռեսուրսներ վարչությունների անձնակազմերի հետ: Վերջիններիս կողմից ներկայացվել են համապատասխան վարչությունների գործառույթները և դրանց արդյունավետ կիրառման ընթացակարգերը, քննարկումների ընթացքում համեմատականներ են անցկացվել նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի գործառույթների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպումները ունեցել են ճանաչողական բնույթ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել Վրաստանի հարկային վարչարարության արդյունավետ փորձը և հետևաբար փաստաթղթեր չեն ստորագրվել: Միաժամանակ վրացական կողմը հայտնել է իր պատրաստակամությունը անհրաժեշտության դեպքում օժանդակելու Հարաստանի Հանրապետության հարկային մարմնին՝ հարկային վարչարարության գծով Վրաստանի արդյունավետ փորձը կիրառելու ուղղությամբ:

Բացի այդ, Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայության հետ հանդիպման ընթացքում նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ վերջիններիս հետ լրացուցիչ քննարկելու հարկային և մաքսային իրավախախտումների վերաբերյալ օպերատիվ եղանակով տեղեկությունների փոխանակման ձևաչափը և եղանակները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության համակարգի բարելավման նպատակով՝ Վրասատանում գործող արդյունավետ մեխանիզմների վերաբերյալ համապատասխան առաջարկությունները սահմանված կարգով կներկայացվեն քննարկման:

10. Գործուղվողը՝ Կարեն Բրուտյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 26.04.2018թ.